# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏՆԱՊ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 33 - 34 (16229) ՇԱԲԱԹ, 26 ԱՊՐԻԼԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Ապրիլի 24-ին Չեխիայի մայրաքաղաք Պրահայում, Արեւելյան գործընկերության 5-րդ տարեդարձի առթիվ, բարձր մակարդակի հանդիպման շրջանակներում կայացավ Վրաստանի եւ Հայաստանի նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Սերժ Սարգսյանի հանդիպումը:*



Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին վրաց-հայկական հարաբերությունների օրակարգը՝ անդրադառնալով քաղաքական երկխոսությանը, տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներում համագործակցության ներկայիս մակարդակին եւ զարգացման հնարավորություններին, նախանշել միջպետական կապերի ամրապնդման հեռանկարները:

Վրաստանի եւ Հայաստանի նախագահները կարեւորեցին բարձր մակարդակի փոխայցելությունները ու հանդիպումները, որոնք, նրանց համոզմամբ, երկու երկրների միջեւ բոլոր ուղղություններով համա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ ՉԻ ԼԻՆԻ»

*Ապրիլի 23-ին Վրաստանի կառավարության նիստում վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, անդրադառնալով ազգային շարժման կողմից տարածված լուրերին, հայտարարեց, որ կառավարությունում փոփոխություններ, տեղափոխություններ եւ պետական հեղաշրջում չի լինի:*



«Հետաքրքիր է, որ նախարարն է պատրաստվում պաշտոնաթող լինել կամ պետական հեղաշրջում անցկացնել: Կասկածում եմ, որ մեր թիմում լինեն 4-5 դավաճաններ: Դավաճաններին արժանվույն պատասխան կտրվի: Սակայն այս հերյուրանքները կարելի է պարզ հասկանալ: Դրանց նպատակն է բնակչության շրջանում ստեղծել որոշակի լարվածություն, արմատավորել անկայունության զգացում եւ գցել տրամադրությունները: Հասարակությունում դրական տրամադրվածություն է, բնակչության 70 տոկոսից ավելին կառավարությանը դրական է ընկալում եւ մեր քաղաքականությունը կհասցնենք մինչեւ վերջ: Դա, խոստանում եմ անձամբ իմ եւ մեր ողջ թիմի անունից: Ես, որպես վար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԵՄ

## ԸՆԴԳԾՎԵՑ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՆՇՐՋԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

*Պաշտոնական այցով Թբիլիսիում են գտնվում Ֆրանսիայի եւ Գերմանիայի արտաքին գործերի նախարարներ Լորան Ֆաբիուսը եւ Վալտեր Շտայնմայերը:*



Այցի շրջանակներում՝ եվրոպական դիվանագետների հետ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեն:

Հանդիպումներում քննարկվեցին Եվրամիությանը ասոցիացման համաձայնագրի ստորագրման, Հյուսիսատլանտյան ալյանսին Վրաստանի անդամակցության հեռանկարները: Կողմերը քննարկեցին նաեւ Ուկրաինայում ծավալվող իրադարձությունները:

Հանդիպումների ավարտին կայացած մամլո ասուլիսում, Վրաստանի ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեն Գերմանիայի եւ Ֆրանսիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարների այցն անվանեց պատմական՝ «հատուկ ծանրաբեռնվածությամբ»:

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 99

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

*Ապրիլի 24-ին լրացավ Հայոց Մեծ եղեռնի 99-րդ տարելիցը: Այդ օրը Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց 1915թ. Օսմանյան Թուրքիայի իրականացրած ոճրի՝ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:*



Անմար կրակի մոտ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ հոգեհանգստյան պաշտոն կատարեց հոգեւոր դասը, պաշտոնատար անձինք գլուխ խոնարհեցին եւ մեկ րոպե լռությամբ հարգեցին սպանված 1,5 միլիոն հայերի հիշատակը: Ծիծեռնակաբերդի բարձունք էին եկել Հայաստանի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 99-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

*Ապրիլի 24-ին Թբիլիսիում, Սուրբ Էջմիածին եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ պատարագ, որին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Հայ համաշխարհային կոնգրեսի վարչության անդամ Ռաֆիկ Աղաջանյանը, վիրահայ հասարակական կազմակերպությունների ղեկավարներ:*



Եկեղեցում Սուրբ պատարագի ավարտից հետո ժողովուրդը հավաքվեց Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում տեղադրված խաչքարի մոտ, որտեղ Վիրահայոց թեմի առաջնորդի եւ հոգեւոր դասի մասնակցությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ անցկացվեցին նաեւ Բաթումիում, Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Ախալցիխեում, Ծալկայում, Վրաստանի հայաբնակ մյուս բնակավայրերում:

## ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ ԿԱՆԳՆԵՑՎԵՑ ԵՎ ՕԾՎԵՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԸ

*... 99 տարի առաջ ապրիլյան այս օրերին սկսվեց 20-րդ դարի առաջին ոճրագործությունը, որին զոհ դարձան ավելի քան 1,5 միլիոն հայորդիներ:*




Սկսած այդ օրվանից աշխարհասփյուռ հայությունը յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին իր ցասումն է արտահայտում եւ բողոքի ձայնը բարձրացնում ցուցաբերելով յուրահատուկ կազմակերպվածություն եւ համախմբվածություն:

Ցասման այդ ալիքից անմասն չի մնում նաեւ ջավախահայությունը, մասնավորապես մեր Նինոծմինդայի մունիցիպալիտետի ազգաբնակչությունը, որին, սակայն, պակասում էր այն ուխտատեղին, որտեղ պետք է այցելեր նինոծմինդացին եւ իր հարգանքի տուրքը մատուցեր Հայոց Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գործակցությունը հետեւողականորեն խորացնելու երկկողմ պատրաստակամության հավաստիքն են եւ զգալիորեն նպաստում են տարբեր մակարդակներում վրաց-հայկական հարաբերությունների հետագա ակտիվացմանը:

Հանդիպմանը նշվեց, որ վերջին ժամանակաշրջանում ստեղծվել է արդյունավետ հիմք Վրաստանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները որակապես նոր մակարդակի բարձրացնելու համար, ինչը լայն հնարավորություններ է ընձեռում երկու պետությունների միջեւ կառուցողական համագործակցության համար՝ նկատի առնելով Վրաստանի եւ Հայաստանի համար սկզբունքային նշանակություն ունեցող հարցերը:

Խոսելով տնտեսական փոխգործակցության զարգացման մասին՝ Գիորգի Մարգվելաշվիլին եւ Սերժ Սարգսյանը կարեւորեցին տրանսպորտի եւ տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաեւ փոխշահավետ մի շարք այլ ոլորտներում համագործակցությունը:

Վրաստանի եւ Հայաստանի նախագահներն անդրադարձ կատարեցին նաեւ տարածաշրջանային խնդիրներին եւ մարտահրավերներին:

ԳՈՐԾԱԴԻՐ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ ՉԻ ԼԻՆԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

չապետ, ստանձնում եմ պատասխանատվություն, որ կառավարությունում փոփոխություններ, տեղափոխություններ եւ պետական հեղաշրջում չի լինի: Դա տարածում են ազգային շարժումը եւ այն մարդիկ, ովքեր հանդիսանում են նրանց գործակալները»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:

Վարչապետը տարածված ասեկոսեներին առնչեց նաեւ բիզնեսը վաճառելու եւ Վրաստանից հեռանալու Բիձինա Իվանիշվիլու մտադրության մասին տարածված լուրերը: «Բիձինա Իվանիշվիլին ոչ միայն չի հեռանում, այլեւ Վրաստանում մնաց այն ժամանակ, երբ վտանգավոր էր ու դժվարին: Սակայն նա կատարեց վճռական քայլը եւ իրականացրեց այն, ինչը ոչ ոք չէր կարող կատարել: Դա է իրականությունը: Իսկ թե ով է փախել երկրից, դա շատ լավ տեսնում ենք, դա 6 տոկոսանոց ազգայինների լիդերն է»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ




# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

*Վրաստանի խորհրդարանն երրորդ ընթերցմամբ հաստատեց ընտրական օրենսգրքում կատարվելիք փոփոխությունները:*

Համաձայն փոփոխությունների, պետական եւ տեղական մարմիններին տրվում է 60-օրյա ժամանակահատվածում ընտրատեղամասերի կարգավորման վերաֆինանսավորման իրավունք: Այդ փոփոխություններով ընտրողները, ովքեր չունեն Վրաստանի քաղաքացու անձնական վկայական կամ անձնագիր, միասնական ընտրական ցուցակում չեն գրանցվի: Նաեւ առանց լուսանկարների է կազմվում ընտրական վարչակազմի աշխատակիցների, բուժհաստատությունների հիվանդների, բանտարկյալների եւ պարտադիր զինծառայության աշխատակիցների ցուցակը, ովքեր քվեարկում են շարժական քվետուփով: Որոշում է ընդունվել նաեւ այն փաստերի կապակցությամբ, երբ տեղամասում գրանցողը չի կարողանում նույնականացնել ընտրողին նրա անձնական վկայականով եւ լուսանկարով: Այդ կապակցությամբ, խորհրդարանում մշակվել են արձագանքման մի քանի տարբերակներ: Հաստատված տարբերակի համաձայն, այն դեպքում, երբ գրանցողի մոտ կասկածներ են ծագում ընտրողի անձնավորության նկատմամբ, հանձնաժողովի նախագահը եւ քարտուղարը դա գրանցում են գրանցման մատյանում, պատճենահանում անձնական վկայականը, այն առաքում նախ մարզային հանձնաժողով, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողով: ԿԸՀ-ն 45 օրվա ընթացքում ձեւակերպում է համապատասխան փաստաթուղթը եւ այն առաքում պետական սպասարկումների զարգացման գործակալություն:

# ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ 34 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԱՇԻՆՔՆԵՐ

*Տեղական ինքնակառավարման ընտրություններին մասնակցելու համար, ապրիլի 22-ի տվյալներով, Վրաստանի ԿԸՀ-ի գրանցման համար հայտ է ներկայացրել 34 քաղաքական կուսակցություն եւ միավորում:*

Հայտ ներկայացնողների թվում են ընտրական երկու դաշինքներ՝ «Վրացական երազանք» եւ «Ոչ խորհրդարանական ընդդիմություն» կոալիցիաները:

«Վրացական երազանք» դաշինքը ներկայացված է քաղաքական վեց կուսակցություններով՝ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան», «Վրաստանի պահպանողական կուսակցություն», «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը», «Վրաստանի հանրապետական կուսակցություն», «Ազատ ժողովրդավարներ» եւ «Ազգային ֆորում»:

«Ոչ խորհրդարանական ընդդիմություն» դաշինքը ներկայացված է «Ազատ Վրաստան» եւ «Նոր աջեր» կուսակցություններով:

ԿԸՀ-ին հայտ են ներկայացրել նաեւ խորհրդարանական «Միասնական ազգային շարժում» ընդդիմադիր կուսակցությունը:

Ներկա դրությամբ, հայտ ներկայացրած ընտրական 34 սուբյեկտներից գրանցում անցել են 15 կուսակցություններ եւ ընտրական դաշինքներ, որոնց թվում են «Վրացական երազանքը», «Ոչ խորհրդարանական ընդդիմությունը» եւ «Միասնական ազգային շարժումը»:

# ԵՐԿՐԻ ՄԱՍՇՏԱԲՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ Է ՇՈՒՐՋ 3,5 ՄԻԼԻՈՆ ԸՆՏՐՈՂ

Ինչպես հայտարարել է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, 2014 թվականի ապրիլի դրությամբ, Վրաստանում գրանցված է 3491105 ընտրող: ԿԸՀ-ի ներկայացմամբ, ընտրողների ցուցակների ճշգրտումը շարունակվում է, եւ դրանք կիրապարակվեն մինչեւ ընտրությունները:

Նշենք, որ անցյալ տարի նախագահական ընտրությունների ժամանակ, երկրի մասշտաբով գրանցված էր 3537719 ընտրող, իսկ 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ գրանցված էր 3613851 ընտրող:

# «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՍԿՍՈՒՄ Է ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

*«Վրացական երազանքը» իր քարոզարշավը սկսում է «Միասին հոգանք Վրաստանի մասին» կարգախոսով: Կոալիցիայի նախընտրական շտաբը ապրիլի 16-ից պաշտոնապես սկսեց գործել «Վրացական երազանքի» կենտրոնակայանում:*

Ինչպես շտաբի բացմանը հայտարարեց շտաբի ղեկավարը, փոխվարչապետ Կախի Կալաձեն, շտաբը լրիվությամբ մոբիլիզացված է եւ ողջ ծանրաբեռնվածությաբ կգործի երկրի մասշտաբով ձեւավորվող 75 շտաբներով: Նրա խոսքերով, բոլոր ռեսուրսները մոբիլիզացված են, որպեսզի տեղական ինքնակառավարման ընտրություններն ավարտվեն վրաց ժողովրդի եւ կոալիցիայի հաղթանակով: Կախի Կալաձեն Գիորգի Գեգեճկորուն ներկայացրեց որպես «Վրացական երազանքի» շտաբի մամլո խոսնակ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՍՏԱՏՎԵԼ

*Ապրիլի 22-ին հրավիրված մամլո ասուլիսում, Վրաստանի արտաքին գործերի առաջին փոխնախարար Դավիթ Զալկալիանին հայտարարեց, որ ԶԼՄ-ների կողմից Սամցխե-Ջավախեթիի ազգությամբ հայ բնակիչների ռուսական անձնագրերի զանգվածային հանձնման մասին տարածված տեղեկատվությունը չի հաստատվում եւ հավելեց, որ «թեպետ մենք ուշադիր հետեւում ենք այդ գործընթացին»:*

Փոխնախարարի խոսքերով, այլ երկրի քաղաքացիություն ստանալու ժամանակ Վրաստանի քաղաքացին պետք է հրաժարվի իր քաղաքացիությունից: Մեկնաբանելով ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ռուսական անձնագրերի հանձնման ընթացակարգի դյուրացման մասին հրամանագիրը, Զալկալիանին նշեց, որ իրենք այդ փաստաթուղթը ուշադրությամբ ուսումնասիրում են: «Թեպետ ցանկանում եմ բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են այդ հարցով, տեղեկացնել, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն ստանալու դեպքում, քաղաքացին ավտոմատորեն զրկվում է Վրաստանի քաղաքացիությունից եւ այդ հանգամանքը պետք է հաշվի առնել»,- հայտարարեց նա:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

*Ուկրաինայի արեւելյան մարզերում վերսկսվել է հակաահաբեկչական գործողության ակտիվ փուլը: Այդ մասին հայտարարել է Ուկրաինայի առաջին փոխվարչապետ Վիտալի Յարեման:*

*Ապրիլի 22-ին հայտնի է դարձել, որ Ուկրաինայի նախագահի պաշտոնակատար Ալեքսանդր Տուրչինովը պահանջել է երկրի արեւելքում վերսկսել հատուկ գործողություն:*

*«Նախագահի պաշտոնակատարի կարգադրությանը համապատասխան՝ հակաահաբեկչական գործողությունը շարունակվում է: Զատկի տոնին դրա ակտիվ փուլը կասեցվել էր, բայց այսօրվանից ակտիվ փուլը շարունակվում է: Իրավապահ մարմիններն աշխատում են վերացնել բոլոր այն կազմավորումները, որոնք ներկայում գործում են Կրամատորսկում, Սլավյանսկում եւ Դոնեցկի ու Լուգանսկի մարզերի այլ քաղաքներում»,- ասաց նա:*

## ՀԱՅՏԱՐԱՐՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

*Ուկրաինան կարող է հասնել էներգետիկական անվտանգության, բայց դրա համար ժամանակ կպահանջվի: Այս հայտարարությամբ ապրիլի 22-ին Կիեւում հանդես է եկել ԱՄՆ-ի փոխնախագահ Ջոզեֆ Բայդենը:*

*Շփվելով Ուկրաինայի նախագահի պաշտոնակատար Ալեքսանդր Տուրչինովի, վարչապետ Արսենի Յացենյուկի, Գերագույն ռադայի պատգամավորների, ինչպես նաեւ Ուկրաինայի նախագահի թեկնածուների հետ, նա ասել է, որ ԱՄՆ-ը պատրաստ է տնտեսական օգնություն ցուցաբերել Կիեւին: Ընդսմին նա նախազգուշացրել է, որ երկրի ղեկավարությունը պետք է պայքարի «կոռուպցիայի քաղցկեղային ուռուցքի» դեմ:*

*Խոսելով արտահերթ նախագահական ընտրությունների մասին, որոնք Ուկրաինայում կանցկացվեն մայիսի 25-ին, նա նշել է, որ դրանք, ամենակարեւորը, կլինեն հանրապետության պատմության մեջ:*

## ԴԻՄԵԼ Է ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ

*Ուկրաինայի նախագահի թեկնածու, «Բատկիվշչինա» կուսակցության առաջնորդ Յուլյա Տիմոշենկոն դիմել է ԱՄՆ-ի Կոնգրեսին,՝ խնդրելով ռազմական օգնություն ցուցաբերել Ուկրաինային:*

*«Բատկիվշչինա» կուսակցության առաջնորդի վարկածով՝ «Ուկրաինային հարկավոր է համակողմանի օգնություն, այդ թվում՝ ռազմատեխնիկական, որը պետք է ներառի հակաօդային եւ հակատանկային միջոցներ եւ օգնությունը զինվորական անձնակազմի ուսուցմանը»:*

ԹՈՒՐՔԻԱ

## ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ՍԻՐԻԱ

*Թուրքիայի ռազմական ստորաբաժանումները ներխուժել են Սիրիայի տարածք պաշտպանելու Սուլեյման շահի դամբարանը:*

*Սիրիայի տարածքում Սուլեյման շահի դամբարանը գտնվում է Թուրքիայի սահմանից 30 կմ հեռավորության վրա՝ Եփրատ գետի ափին, մոտ մեկ հեկտար մակերեսով տարածքի վրա:*

*Ներկայում այդ տաածքը անցել է Ալ Քաիդա ահաբեկչական կազմակերպությանը կից «Իրաքի եւ Լեւանտի իսլամական պետություն» խմբավորման մարտիկների ձեռքը, որոնք կռվում են Սիրիայի կառավարական ուժերի դեմ: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն ավելի վաղ հայտարարել էր, որ իր երկիրը պատրաստ է պաշտպանելու Սիրիայում իրեն պատկանող տարածքը:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՍՏԱՆՈՒՄ Է ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 35 ՏՈԿՈՍԸ



***«Ամերիկայի ձայն» ռադիոկայանին տված հարցազրույցում Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ Վրաստանում աշխատավարձ ստանում է աշխատունակ բնակչության 35 տոկոսը:***

«Վրաստանում գործազրկությունը լուրջ հիմնախնդիր է: Պաշտոնապես Վրաստանում գրանցված է գործազուրկների 15 տոկոսը: Կարող եմ նշել նաեւ այլ թվեր՝ Վրաստանի բնակչության 26 տոկոսն աշխատանք չունի, գյուղերում այդ ցուցանիշն ավելի ցածր է, սակայն դա կապված է գյուղական վայրերում մարդկանց ինքնազբաղվածությամբ, այն մարդկանց գործունեությամբ, ովքեր տնային տնտեսություններում արտադրում են մթերքներ, այն լրիվությամբ կամ մասնակի իրացնում: Այդպիսով, եթե քննարկենք իրատեսական թվերով, ապա աշխատավարձ է ստանում երկրի աշխատունակ բնակչության ընդամենը 35 տոկոսը եւ դա վատ ցուցանիշ է: Հենց այդ պատճառով էլ պետության տնտեսական քաղաքականությունը պետք է ապահովի տնտեսական աճը, ինչը նախատեսում է բնակչության համընդհանուր ներգրավում տնտեսական զարգացման գործընթացում, դրա արդյունքների օգտագործումը կրթության, առողջապահության ոլորտներում եւ յուրաքանչյուր քաղաքացու պահանջների լրիվ բավարարման համար ենթակառույցների հիմնում»,- հայտարարեց ֆինանսների նախարարը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# 10 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ



***Ամերիկայի Միացյալ Նահանգները Վրաստանին հատկացնում է 10 միլիոն դոլարի բժշկական սարքավորանքներ: Այդ մասին հայտնի դարձավ Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոյի եւ Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Նորլանդի հանդիպման ժամանակ:***

Բժշկական սարքավորանքները Վրաստան կբերվեն Գերմանիայում տեղակայված ամերիկյան ռազմակայանից: Սարքավորանքները կտրվեն այրվածքների կենտրոնին, վետերանների հոսպիտալին, շտապ օգնության տարածաշրջանային ծառայություններին, քրեակատարողական հաստատություններին եւ բժշկական մյուս ձեռնարկություններին:

«Դա բժշկական սարքավորումների մեծ քանակությամբ անվճար փոխանցում է, ինչը նշանակալից աջակցություն է Վրաստանի բուժհաստատությունների համար»,- հայտարարեց Դավիթ Սերգեյենկոն:

ԿՐԹԱԿԱՆ

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ

***2014 թվականին միասնական ազգային քննությունները կմեկնարկեն հունիսի 26-ին: Միասնական ազգային քննությունների անցկացման ընթացակարգը հրապարակվել է քննությունների ազգային կենտրոնի պաշտոնական կայքէջում:***

Վրաց լեզվի եւ գրականության առաջին քննությունը կանցկացվի հունիսի 26-27-ին, ընդհանուր ունակությունների քննությունը՝ հունիսի 30-ին եւ հուլիսի 1-ին, անգլերեն լեզվի քննությունը՝ հուլիսի 2-3-ին, իսկ ռուսերենի, գերմաներենի եւ ֆրանսերենի քննությունը՝ հուլիսի 4-ին:

Մյուս քննությունների անցկացման կարգը հետեւյալն է. հուլիսի 8-ին՝ գրականություն, հուլիսի 9-ին՝ աշխարհագրություն, հուլիսի 10-ին՝ պատմություն, հուլիսի 11-ին՝ մաթեմատիկա, հուլիսի 14-ին՝ քիմիա, հուլիսի 15-ին՝ կենսաբանություն, հուլիսի 16-ին՝ ֆիզիկա, հուլիսի 18-ին՝ կերպարվեստ եւ կիրառական արվեստ:

Հուլիսի 14-ին կանցկացվի ուսանողների գրանտային մրցույթը:

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՍԿՍՎԵՆ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ



***Քննությունների ազգային կենտրոնի տնօրեն Մայա Միմինոշվիլու հայտարարությամբ, Վրաստանի հանրային դպրոցներում այս տարի ավարտական քննությունները կսկսվեն մայիսի 20-ին եւ կավարտվեն հունիսի 19-ին: Քննությունը հանձնելու են 11 եւ 12-րդ դասարանի աշակերտները:***

Մայա Միմինոշվիլու խոսքերով, ավարտական քննությունները բաժանվում են երկու մասի՝ 12-րդ դասարանցիները կհանձնեն չորս առարկայից քննություն, իսկ 11-րդ դասարանցիները՝ այն չորս առարկաների քննությունը, որոնք այս տարի ավարտում են:

12-րդ դասարանցիների համար քննությունները կսկսվեն մայիսի 20-ին:

Այդ օրը նրանք կծանոթանան այն ծրագրերի հետ, որով հանձնելու են քննությունները:

Առաջին, վրաց լեզվի եւ գրականության քննությունը կանցկացվի մայիսի 21-ին: Քննությունները կավարտվեն մայիսի 25-ին: Այդ նույն ժամանակ քննություն կարող են հանձնել այն 12-րդ դասարանցիները, ովքեր աշնանը չեն հաղթահարել արգելագիծը:

Ինչ վերաբերում է 11-րդ դասարանցիներին, ապա նրանց գրանցումն սկսվել է ապրիլի 25-ին: Ծանոթության օրը՝ հունիսի 13-ն է, իսկ առաջին քննությունը նշանակված է հունիսի 14-ին: Քննությունները կավարտվեն հունիսի 19-ին:

Մայա Միմինոշվիլու տեղեկատվությամբ, անցյալ տարվա համեմատությամբ, 12-րդ դասարանցիների թիվը նվազ է եւ կազմում է ընդամենը 39 հազար:

# ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԵՐԵՔ ՓՈՒԼՈՎ

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության տեղեկատվությամբ, 2014-2015 ուստարվա համար առաջին դասարանցիների գրանցումը կիրականացվի երեք փուլով, ընդ որում՝ առաջին փուլը մեկնարկել է ապրիլի 23-ին եւ կավարտվի մայիսի 2-ին:***

Անդրանիկ փուլը կանցկացվի միայն հանրակրթական դպրոցներում, եւ այդ փուլում կգրանցվեն այն աշակերտները, ում քույր-եղբայրները սովորում են այդ դպրոցում, ծնողները հանդիսանում են այդ դպրոցի աշխատակից եւ այդ ընտանիքներից միաժամանակ երկու եւ ավելի երեխաներ ընդունվելու են դպրոց:

Երկրորդ փուլը անցկացվելու է օնլայն պայմանակարգով: Գրանցումը կմեկնարկի մայիսի 20-ին եւ կշարունակվի մինչեւ հունիսի 20-ը:

Երրորդ փուլը կանցկացվի հուլիսի 10-18-ը: Այդ փուլում նախորդ փուլերի ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի չներկայացման արդյունքում ծագած թափուր տեղերի համար կգրանցվեն այն աշակերտները, ովքեր չեն կարողացել գրանցվել առաջին եւ երկրորդ փուլերում եւ կներկայացնեն համապատասխան փաստաթղթերը:

ՔՐԵԱԿԱՆ

# ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԴԱՏԱՐԱՆՆ ԱՐԴԱՐԱՑՐԵՑ ԲԱՉՈ ԱԽԱԼԱԻԱՅԻՆ

***Թբիլիսիի բողոքարկման դատարանն ուժի մեջ թողեց պաշտպանության նախկին նախարար Բաչո Ախալաիայի եւ նրա յոթ ենթակաների նկատմամբ Թբիլիսիի քաղաքային դատարանի արդարացուցիչ որոշումը:***

Դատավոր Լեւան Թեւզաձեի հայտարարությամբ, դատախազությունը չկարողացավ ներկայացնել նախկին նախարարի մեղադրանքի ապացուցման նոր փաստեր:

Հիշեցնենք, որ Ախալաիան եւ նրա ենթակաները մեղադրվում էին զինվորականների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մեջ: Խոսքը վերաբերում է Յագլուջա սարի վրա դիմացկայնության վարժանքների ծրագրի շրջանակներում յոթ զինծառայողի ուսուցման փաստին:

Նշենք նաեւ, որ, չնայած բողոքարկման դատարանի որոշման, Բաչո Ախալաիան գտնվում է բանտարկության մեջ, քանզի նա 2006 թվականին քրեակատարողական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնում ծառայական իրավասությունների շահարկման համար դատապարտվել է հինգ տարվա ազատազրկման:



## ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԿՀԱՆԴԻՊԵՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Վրաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլու, Աբդուլլահ Գյուլի եւ Իլհամ Ալիեւի մասնակցությամբ մայիսի սկզբին Թբիլիսիում տեղի կունենա տարածաշրջանային անվտանգության գծով գագաթաժողով: Այս մասին վրացական «Մաեստրո» հեռուստաալիքին տված հարցազրույցում հայտարարել է Վրաստանի նախագահը:*

*Գիորգի Մարգվելաշվիլու խոսքով, գագաթաժողովում քննարկվելու են հատկապես տարածաշրջանում անվտանգության հետ կապված հարցեր:*

## ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀՎԵՑ 95 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

*Զատկական տոնի կապակցությամբ, Վրաստանի նախագահը ստորագրել է 95 բանտարկյալին ներում շնորհելու հրամանագիրը: Բոլոր բանտարկյալները քրեակատարողական հաստատությունից ազատ արձակվեցին ապրիլի 19-ին:*

*Նշենք, որ ներման հանձնաժողովը նախագահին ներկայացրել էր 100 բանտարկյալի ներում շնորհելու նախագիծ:*

## ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

*Ապրիլի 22-ին Թբիլիսիում տեղի ունեցավ Միխեիլ Սաակաշվիլու անվան նախագահական գրադարանի բացման արարողությունը, որին սկայպի միջոցով մասնակցեց Վրաստանի նախկին նախագահը:*

*Միջոցառմանը ներկա էին Միխեիլ Սաակաշվիլու կինը՝ Սանդրա Ռուլովսը, նախկին նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Անդրո Բարնովը:*

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

*2008 թվականի օգոստոսյան պատերազմի ուսումնասիրության հանձնաժողովն ավարտեց աշխատանքը: Այդ մասին հայտարարեց Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան եւ հավելեց, որ ուսումնասիրության արդյունքները կներկայացվեն ամսվա վերջին: Նրա խոսքերով, պատերազմի ժամանակ բացահայտված բոլոր սխալներն ու ձեռքբերումները կդրվեն Վրաստանի պաշտպանական հիմնադրույթի հիմքում: «Փաստաթղթի մշակման աշխատանքն ավարտվել է եւ հուսով ենք, որ ամսվա վերջին դաշնային շտաբը այն կներկայացնի երկրի քաղաքական ղեկավարությանը: Ցանկանում եմ կրկին նշել, որ մեր գլխավոր խնդիրն է ուսումնասիրել թույլ տրված սխալները, նվաճումները եւ այդ ամենը դնել մեր պաշտպանական հիմնադրույթի հիմքում»,- հայտարարեց Ալասանիան:*

*Նշենք, որ 2008 թվականի ռուս-վրացական պատերազմի ուսումնասիրման հանձնաժողովը կազմավորվել էր Վրաստանի պաշտպանության նախարարության կողմից 2013 թվականին:*

## ՀՐԱԶԵՆԻ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄ

*Ախալքալաքիի Դիլիսկա գյուղի բնակիչ,1968 թվականին ծնված Սուրիկ Մ.-ն, Հոկամի գյուղի բնակիչ, 1975 թվականին ծնված Մերաբ Ն.-ն եւ Օրջա գյուղի բնակիչ, 1985 թվականին ծնված Գագիկ Բ.-ն կամավոր Ախալքալաքիի ներքին գործերի շրջանային վարչությանն են հանձնել հրազեն եւ զինամթերք,՝ կարճափող որսորդական հրացաններ, երեք նռնակներ, երեք ուժանակներ, տարբեր տրամաչափի 18 փամփուշտ, երկու պահեստատուփով եւ 5 մարտական փամփուշտներով մի ատրճանակ, 400 գրամ տրոտիլ, 60 մարտական փամփուշտներով ինքնաձիգ:*

# ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նախագահ Սերժ Սարգսյանը՝ տիկնոջ Ռիտա Սարգսյանի հետ, Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, օրենսդիր եւ գործադիր մարմինների ներկայացուցիչներ, զինված ուժերի բարձրագույն սպայակազմը, քաղաքական գործիչներ, մտավորականներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ, հայրենակցական միությունների, հասարակական կազմակերպությունների անդամներ:

Ապրիլի 24-ին հիշատակի արարողություններ կատարվեցին Հայաստանի բոլոր շրջաններում, աշխարհի տարբեր երկրների հայկական համայնքներում: Հայ Առաքելական եկեղեցու բոլոր թեմերում մատուցվեց հոգեհանգստյան պատարագ:

Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն է: Թուրքիան մերժում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մոտ մեկուկես միլիոն հայերի զանգվածային ջարդեր իրականացնելու մեղադրանքները եւ չափազանց ցավագին է վերաբերում Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ Արեւմուտքի քննադատություններին: Հայոց ցեղասպանության փաստը ճանաչել են 20-ից ավելի երկրներ,



այդ թվում՝ Ուրուգվայը, Լիտվան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Նիդերլանդները, Սլովակիան, Շվեդիան, Շվեյցարիան, Հունաստանի, Կիպրոսի, Արգենտինայի, Բելգիայի խորհրդարանները, Կանադայի խորհրդարանի համայնքների պալատը եւ Լեհաստանի սեյմը, Վատիկանը, ԱՄՆ 42 նահանգներ, Եվրախորհրդարանը, եկեղեցիների համաշխարհային խորհուրդը:

# ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱ. «ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՆԿԵՂԾ ՈՒ ԱՐԴԱՐ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԲՈԼՈՐԻՍ ՇԱՀԵՐԻՑ Է ԲԽՈՒՄ»



*ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման 2014թ. ապրիլի 24-ին ամենամյա ուղերձ է հղել հայ ժողովրդին: Նա «Հայոց ցեղասպություն» եզրը չի օգտագործել եւ կրկին 1915թ. իրադարձություններն անվանել է Մեծ եղեռն:*

Իր ուղերձում ԱՄՆ նախագահը, մասնավորապես, հայտարարեց. «Այսօր մենք հիշատակում ենք Մեծ եղեռնը եւ հարգանքի տուրք մատուցում նրանց, ովքեր զոհ գնացին 20-րդ դարի սարսափելի վայրագություններից մեկին: Մենք սոսկումով ենք հիշում 99 տարի առաջ տեղի ունեցածը, երբ 1,5 միլիոն հայեր կոտորվեցին եւ մահվան երթի դատապարտվեցին Օսմանյան կայսրության վերջին օրերին:

Ես հետեւողականորեն հայտարարել եմ իմ տեսակետը 1915թ. դեպքերի կապակցությամբ, եւ իմ տեսակետը չի փոխվել: Այս փաստերի ամբողջական, անկեղծ եւ արդար ճանաչումը բոլորիս շահերից է բխում»,- հայտարարեց ԱՄՆ նախագահը:

# ԷՐԴՈՂԱՆ. «ՑԱՎԱԿՑՈՒՄ ԵՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ»

*Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հանդես է եկել ապրիլի 24-ի հետ կապված պաշտոնական հայտարարությամբ, որում «անմարդկային» կոչեց 1915 թվականի իրադարձությունները եւ ցավակցություն հայտնեց Օսմանյան կայսրության զինվորականների կողմից զոհված հայերի ժառանգներին:*



Ինչպես տեղեկացնում է Reuters գործակալությունը, դա առաջին դեպքն է, երբ Թուրքիայի վարչապետը «նման անկեղծ ցավակցություն է հայտնել»:

«Մենք կցանկայինք, որ 20-րդ դարի սկզբների իրադարձություններում զոհված հայերի հոգիներին հանգստություն, իսկ նրանց ժառանգներին մենք ցավակցություն ենք հայտնում»,- հայտարարեց Էրդողանը:

Էրդողանը հույս հայտնեց, որ երկու ազգերը «կկարողանան միասին եւ արժանիորեն հիշել իրենց անցյալն ու կորուստները»: Նա հայերին կոչ արեց համատեղ ուսումնասիրել պատմական իրադարձությունները, դա չդարձնելով «քաղաքական լծակների»:

Reuters գործակալությունը նշում է, որ վարչապետի հայտարարությունն անսպասելի էր եւ ներկայացվեց շատ ավելի հաշտեցման ոճով, քան դա եղել էր այդ թեմայով մյուս բարձր պաշտոնյա թուրք քաղաքագետների ելույթներում:

# ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*Պոլսո Հայոց պատրիարքարանը հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ՝ մեկնաբանելով Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ուղերձը հայերին:*

Հաղորդագրության մեջ պատրիարքարանը հայտնել է, որ այս հայտարարությունը կարող է հիմնաքար հանդիսանալ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերություններում կառուցվելիք կամրջի համար:

«Մեր հարգարժան վարչապետն այս հայտարարությամբ նոր էջ բացեց հայ-թուրքական հարաբերություններում, Անատոլիայի սրտում պատերազմի ցավերը համտեսած մուսուլման եւ ոչ մուսուլման օսմանյան քաղաքացիների հիշատակին հարգանք դրսեւորեց»,- նշվում է պատրիարքարանի տարածած հաղորդագրության մեջ: Պատրիարքարանը նաեւ կոչ է արել Թուրքիայի հակառակորդներին ճիշտ մեկնաբանել ուղերձը՝ հեռու մնալով ատելություն եւ թշնամանք սերմանող հայտարարություններից: «Թող Աստված ընդունի մեր աղոթքները եւ վիրավոր սրտերը, քարերից ու փշերից ազատելով, պտղատու հող դարձնի փոխադարձ սիրո եւ հարգանքի սերմերի համար»,- ասված է հայտարարության եզրափակիչ մասում:

# ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԷՐԴՈՂԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ԱՎԵԼԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ Է»

*Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանն արձագանքել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության տարելիցին, ընդառաջ արված հայտարարությանը, նշեց.*

«Մենք ուշադրությամբ ծանոթացանք Թուրքիայի վարչապետի այդ հայտարարությանը, փորձելով դրանում տեսնել պատմությանն առերեսվելու առաջին փորձ, սակայն, ցավոք, պետք է փաստենք, որ այն Հայոց ցեղասպանության հանցագործության ժխտման եւ քողարկման հերթական՝ թերեւս ավելի կատարելագործված դրսեւորում է: Իրականում Թուրքիայից այլ բան է պահանջվում. ճանաչել պատմությունը եւ աներկբայորեն դատապարտել դրանում առկա հանցանքները: Քրիստոնեության մեջ դա կոչվում է ապաշխարանք: Վստահ եմ՝ դրա համարժեքը կա նաեւ այլ կրոններում: Ինչպես նշել է նախագահ Սարգսյանն իր ուղերձում. «Միայն ճանաչումն ու դատապարտումը կարող են կանխել նման հանցագործությունների կրկնությունը»:

# ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ Է ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ




*Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը հայտարարեց, որ պատրաստվում է 2015 թվականի ապրիլի 24-ին Հայաստանում մասնակցել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հիշատակի միջոցառումներին:*

Այդ մասին Օլանդը նշեց Փարիզում Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման միջոցառման ժամանակ: Ֆրանսիայի նախագահը պատրաստակամություն է հայտնել աշխատել Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանը հասնելու համար: «Այս ողբերգությունն ունի անուն, միայն մեկ անուն. սա Ցեղասպանություն է: Այլ անուն չկա»,- հայտարարեց Օլանդը: «Մտածում եմ, որ բոլորի միտքը զարգանա»,- ասաց Օլանդը՝ անհրաժեշտ համարելով, որպեսզի Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը: Միաժամանակ, Օլանդն առաջընթաց է համարել Ցեղասպանության վերաբերյալ Թուրքիայի վարչապետ Էրդողանի հայտարարությունը, սակայն դա անբավարար է գնահատել:

# ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԵՑ ԽԱՉՔԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻՆ

*Ապրիլի 21-ին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում, տեղի ունեցավ խաչքարի օծումը:*



Այդ խաչքարը, որ Ջուղայի պատմական խաչքարերից մեկի կրկնօրինակն է (հեղինակ՝ վարպետ Վարագդատ Համբարձումյան) ու այդ իմաստով առանձնակի խորհուրդ ուներ, Հայաստանից Թբիլիսի է բերվել պետերբուրգահայ բարերար Հրաչյա Պողոսյանի հովանավորությամբ:

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը, Հայաստանի սփյուռքի նախարարության Կովկասյան վարչության տնօրեն Տարոն Շագոյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Աջարիայում, Գուրիայում եւ Իմերեթիայում գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը, Անդրկովկասում լատինա-կաթոլիկական թեմի առաջնորդ Տեր Ջուզեպպե եպիսկոպոս Պազոտտոն, Վրաստանի Բապտիստական-Ավետարանական արքեպիսկոպոս Մալխազ Սոնղուլաշվիլին, Վրաստանում ավետարանական-լյութերական եկեղեցու առաջնորդ Հանս-Յոահիմ Կիդերլենը:

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանի ներկաներին ուղղված խոսքում նշեց, որ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարի տեղադրումը Վրաստանի մայրաքաղաքում հույժ կարեւոր ու պատմական նշանակության իրադարձություն է:

Ելույթներ ունեցան նաեւ Հայաստանի Ազգային Ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, արքեպիսկոպոս Մալխազ Սոնղուլաշվիլին, հայաստանցի գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանը, պետերբուրգաբնակ Յուրի Կլոնովը, բանաստեղծ-թարգմանիչներ Գիվի Շահնազարը եւ Անահիտ Բոստանջյանը:

Բանախոսների խոսքում բարձրաձայնվեց շնորհակալանք՝ միջոցառման հովանավոր Հրաչյա Պողոսյանի հասցեին:

Ցեղասպանության զոհերին նվիրված արարողակարգն ավարտվեց Թբիլիսիի «Քորթիարդ-Մարիոտ» հյուրանոցում՝ Երեւանի «Զանգակներ» համույթի դասական երաժշտության համերգով (գեղարվեստական ղեկավար՝ Շահեն Քեշիշյան):

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԿՈՉԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Վրաստանում գործող հայկական հասարակական կազմակերպությունները՝ «Վրաստանի հայ համայնքը», Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակութային կենտրոնը, «Սամցխե-Ջավախքի հասարակական կազմակերպությունների խորհուրդը», «Թբիլիսահայերի վեհաժողովը» եւ «Թբիլիսահայերի միությունը» դիմել են երկրի խորհրդարանին՝ խնդրանքով, որպեսզի օրենսդիրները քննարկեն եւ սկսեն Ցեղասպանության փաստի ճանաչման պաշտոնական քննարկումները:

Նշենք, որ արդեն մի քանի տարի է, ինչ նման ուղերձ է հղվում Վրաստանի խորհրդարանին:

# ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄՈՏ

Ապրիլի 24-ին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում Սուրբ պատարագի ավարտից հետո, ժողովուրդը բողոքի պաստառներով, Վրաստանի եւ Հայաստանի պետական դրոշներով շարժվեց դեպի Թբիլիսիում Թուրքիայի դեսպանություն, որտեղ կազմակերպվեց բողոքի խաղաղ ակցիա: Խաղաղ հանրահավաքին մասնակցեցին ինչպես Թբիլիսիի հայկական կազմակերպությունները, այնպես էլ՝ Թբիլիսիի այլ համայնքների ներկայացուցիչները: